ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 30

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու 10 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Բաղրամյան համայնքի ղեկավարի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
2. Բաղրամյան համայնքի 2014 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքների ամփոփման և օգտագործման համար ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին:
3. Բաղրամյան համայնքի տեղական տուրքերի և վճարների սահմանման մասին :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 31-Ն

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետին համապատասխան և «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի դրույթներով ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Բաղրամյան համայնքի ղեկավարի աշխատավարձը 200,000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Հաստատել Բաղրամյան համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1, 2, հավելվածների:
3. Ուժը կորցրած ճանաչել Բաղրամյան համայնքի ավագանու 29 հուլիսի 2014 թվականի թիվ 13-Ն որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ**

Հավելված՝ 1
Բաղրամյան գյուղական համայնքի
ավագանու 2014թ. դեկտեմբերի 4-ի N 31-Ն որոշման

ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀհազ.դրամ/
Համայնքի ղեկավար		200,0
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	110,0
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	146,0
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	138,0
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	137,0
Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	99,0
Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	101,0
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ		
Մշակույթի տան տնօրեն	1	83.0
Գրադարանավար	1	81.0
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հավաքարար	1	90,0
Պահակ	1	81,0
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Հարկահավաք	1	90.0

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Բաղրամյան գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 31-Ն որոշման

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>-Ի ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ
Տնօրեն	1	132.0
Հաշվապահ	1	70.822
Լոգոպեդ	1	70.822
Բուժքույր	1	66.138
Երաժշտ. ուսուցիչ	1	66.138
Դաստիարակ	2	269.236
Դայակ	2	147.200
Խոհարար	1	71.200
Լվացքարար	1	66.138
Դռնապահ	1	71200
Պահակ	1	66.138

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 32-Ն

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ, ԴՈՒՐՍ ԳՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետին համապատասխան ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Բաղրամյան համայնքի 2014 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքները:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 33-Ն

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան. ***համայնքի ավագանին որոշում է՝***

Սահմանել Բաղրամյան համայնքի 2015 թվականի համար տեղական տուրքերը և վճարները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ**

Հավելված 1
Բաղրամյան համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 4 -ի N 33-Ն որոշման

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 ՀՀ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000ՀՀ դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40.000 ՀՀ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 ՀՀ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 ՀՀ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 ՀՀ դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 ՀՀ դրամ:

4. *Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝*

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 ՀՀ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 ՀՀ դրամ:

5. *Համայնքի տարածքում՝*

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 ՀՀ դրամ.

գ)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 դրամ.

գա)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 ՀՀ դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.

Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 25.000 դրամ.

6.*Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝*

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 ՀՀ դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500.000 ՀՀ դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 ՀՀ դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 ՀՀ դրամ:

7. *Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝*

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3.000 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50. 000 ՀՀ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3000 ՀՀ դրամ:

10. <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,5 գործակցով:

11. ***Սահմանվում են հետևյալ տեղական վճարներ՝***

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ 10.000 ՀՀ դրամ.

բ) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ 1000 ՀՀ դրամ.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ 1000 ՀՀ դրամ:

Համայնքի տարածքում սահմանել աղբահանության վճար՝

1) կենցաղային աղբի համար

յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 0 դրամ.

2) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար՝

ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 5.000 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ